

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 12 ֆր.  
Վեցամսեայ 6 «

ԱՐՏԱՍՍԱԶՄԱՆ


2 քիւ լեկի ծրուսի)  
Տարեկան 14 ֆր.  
Վեցամսեայ 7 ֆր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 տղ.  
Վեցամսեայ 1.50 «

Կ Ա Ն Խ Ի Կ

Մանուցման տղը  
20 ասնիքով



Լ Ր Ա Գ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՑԷ

Rédaction du journa

„Iraouunk“

V A R N A (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրութիւնք եւ  
չին տրուիր

ՆԱԽԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ

Պոլսոյ Պատրիարքարանը և մասնաւորապէս Ուսում, խորհուրդը ազգ. նախակրթարաններու հակողութիւնը իրենց լուրջ ուշադրութեան տաւարկայ ըրած են և երկու տարիէ ի վեր շրջանաւարտներու քննութիւնը Ուսում. խորհուրդէն ընտրուած քննիչ Յաննանախումբի մը յանձնուած է, որուն արժանաւոր գտած շրջանաւարտներուն միայն վկայական ներկը տրուին:

Շատ մը օտար տարրերէ շրջապատուած հայ ազգային սերունդին մէջ ազգային զգացումները վառ պահելու և հայկական գանգուաձէն բաժնուելու վտանգէն մեր գաւազները ազատելու համար էն կարեւորը անոնց նախնական դաստիարակութեան հոգ տանելն է:

Ազգ. նախակրթարանաց շրջանաւարտներուն վկայականաց բաշխման հանգէսին Պատրիարքը իր բանախօսութեան մէջ շատ իրաւացի կերպով ծանրացաւ սա ըսկզբունքին վրայ, թէ ազգային դաստիարակութեան էութիւնը կը բովանդակի նախակրթութեան մէջ. բաւական է որ սղգը խնամքով աւանդէ այս նախակրթութիւնը, հոգ չէ որ շրջանաւարտները այնուհետեւ ինչ տեսակ տոհմային կամ օտար ուսում ստանան իրենց կեանքի ասպարէզին համար, հայ կամ օտար հաստատութեանց մէջ, Անխուսափելի է որ օտարին պիտի դիմենք բարձրագոյն ուսում առնելու համար: Միթէ մեր նախնիք ալ Աթէնք, Բիզանդիոն, Ալեքսանդրիա, Անտիոք, Կեսարիա չէին դիմած ուսումնին կատարելագործելու համար: Բաւական է որ հայ տղան հայ նախակրթարան յաճախէ: Ալ անկէ ետքը վտանք չկայ որ տղան ուժանայ, հեռանայ ազգային կրթութենէն ու զգացումներէն, Նախակրթարանի մէջ պիտի վճռուի ազգային և օտար կրթութեան պայքարը: Բայց այս նախակրթութիւնն պէտք չէ որ օտար ըլլայ կամ օտարամուտ: Մեր բոլոր

խնամքը պէտք է կեդրոնացնենք նախակրթութեան վրայ. ամեն ջանք ընենք որ ապագայ սերունդը ազգային յարկին տակ լաւ մը իւրացնէ այս տոհմային նախակրթութիւնը:

Ահա այս տեսակետով է որ ամեն ազգ իրեն աւագ պարտականութիւն սեպած է իր գաւազները իր ազգային նախակրթարանին մէջ նախ դաստիարակել և յետոյ յանձնել օտարին: Իսկ ազգակալ պետութիւնները և կրօնական մարդորս ընկերութիւնները նոյն կրթութեան ղեկ պայքարելու և եթէ նպատակաւ առաջինը բռնի եւ երկրորդը հրապուրիչ միջոցներով, կը ջանան տնտեսապէս և բարոյապէս տկար ժողովուրդներու գաւազները խել իրենց ազգային նախակրթարաններէն որպէսզի այդ մանկիկներուն ջինջ ու մաքուր սրտերուն մէջ զետեղեն իրենց թունաւոր պլանները, զանոնք ուժացնելով իրենց տոհմային նուիրական զգացումներէն:

Այս վտանգին դիմագրաւելու համար էր որ հոգեւորս Գէորգ և Մակար կաթողիկոսները այնչափ մտաւտանլութիւն կրեցին Ռուսահայ նախակրթարաններու գրաւման ղեկ պայքարելով: Միեւնոյն պատճառաւ է որ թուրքիա լեցուող պապական և խղճական ընկերութիւնները լուրջ ընդդիմութեան կը հանդիպին պարտաճանաչ հայ առաջնորդներու եւ խորհուն ազգայիններու կողմէ: Ասոնք ամեն ճիգ ի գործ կը դնեն, նոյն իսկ բռնութեանց երկրին մէջ, այդ մարդորս օտար ընկերութիւններու հաստատած նախակրթարաններէն հեռի պահել ազգին անչափահաս մանուկները:

Այս նախանձախնդրութիւնը ալ աւելի պէտք է ըլլայ հայ գաղթավայրերու մէջ, ինչպէս Պոլսկարիա, Ռումանիա, Եգիպտոս և ուրիշ տեղեր, ուր փոքրաթիւ հայ յեր բազմաթիւ օտարականներէ շրջապատուած, ենթակայ են միշտ երկրին զօրաւոր տարրին ազդեցութեան, և հետեւապէս տարրալուծուելու, ձուլուելու վտանգը անխուսափելի է, եթէ ազգային նախակրթութեան պէտք

կրած խնամքը չի տրուի:

Ուրախ ենք որ Պոլսկարահայրցարդ իր այս պարտականութիւնը բաւական լաւ ըմբռնած, ջանացած է ու կը ջանայ իր նախակրթարանները կանգուն պահելու: Բայց տեսուր պարագայ մը կայ թէ այս վերջին տարիներս Պոլսկարիոյ մէջ երբեմն հայ ծընողներ իրենց հայ գաւազները պոկկար և օտար նախակրթարաններ զրկել սկսած են: Ասոնք իրենց սխալը չուտ պիտի հասկնան եթէ մտածեն թէ Պոլսկար նախակրթարաններէ իրենց գաւազները ոչ ներթապէս և ոչ բարոյապէս մեծ բան մը պիտի չահին, այլ անոնց մեծագոյն կորուստը պիտի ըլլայ ազգային դաստիարակութենէ զրկուիլը ու տոհմային նուիրական զգացումներէ ուժացումը: Այսօր բարոյապէս կրնանք բսել թէ ազգ. նախակրթարանի շրջանը աւարտելէ առաջ պոկկար վարժարան երթալով, նոյն իսկ Ժիմնազը աւարտող Պոլսկարահայ երիտասարդներէն շատերը իրենց մայրենի լեզուին մէջ բոլորովին տրդէտ մնալէ զատ, պոկկարիներէն մէջ ալ բան մը չեն եղած, անոնք երկու տող չիտակ պոկկարներէն զրկել չեն գիտել: Ասկէ զատ, եթէ պոկկարներէն իւրացուցած իսկ ըլլան, իրենց համար պետական պաշտօններ չի կան: Բռնի որ Պոլսկար կառավարութեան պէտքէն եռապատիկ աւելի պոկկար թեկնածուներ կան պաշտօնի: Իսկ Պոլսկարիաէն դուրս պոկկարներէն հայերէնէն ոչ մի առաւելութիւն չի ներկայացներ: Նաեւ պոկկար վարժարաններէն և ոչ մին հայ վարժարաններու չափ ուժ չէ տուած և չի տար ունէ եւրոպական լեզուի մը, որով գոնէ կարող ըլլայ հայ ժիմնազականը արտասահմանի մէջ իր առջեւ բաց ասպարէզ մը գտնելու:

Վերջապէս Պոլսկար կամ օտար վարժարանները հայուն համար ոչ մէկ առաւելութիւն չեն ներկայացներ, եթէ հայ պատանին նախ ազգ. նախակրթարանէ մը շրջանաւարտ չէ:

ԳՈՐԴՊԷՐ

ԲԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՅՈՒԴԱՐՁԷ

Օրուան էն հետաքրքրական լուրն է ֆրանսական նաւատորմիդին դէպի Թիւրքիոյ շուրերը յառաջանալը:

Ֆրանսայի Միջերկրական նաւատորմիդը Թուլոնէ ճամբայ ելած ըլլալով, անոր մէկ նաւաբաժինը՝ որ եօթը պատերազմական նաւերէ կը բաղկանայ, Դիւր-ժովակալ Գէյառին հրամանատարութեան տակ Արեւելք յառաջանալով, Սէլանիքի և Միտիլի մօտիկ, այսինքն Չմիւռնիոյ և Տարտանէլի շուրերէն ոչ հեռու հասած և նոյն իսկ Թուրքիոյ կարեւոր մէկ նաւահանգիստը պրաւած կամ գրաւելու վրայ ըլլալ կը կարծուի: Նախարարական խորհրդոյ որոշումը և ժողովալին տրուած հրահանգը գաղտնի կը մնան, բայց Բարիզի էն կարեւոր թերթերը կը կարծեն գիտնալ թէ Դիւր-ժովակալ Գէյառ հրաման ստացած է թուրք նաւահանգստի մը մաքսատունը գրաւել, 2000 զինուոր ցամաք հանելով, և չի մեկնիլ տնկէ մինչեւ որ թուրք կառավարութիւնը զոհացում տայ Ֆրանսայի պահանջներուն:

Նաւաբաժինն դէպի Արեւելք ճամբայ ելնելու լուրին Պոլսի հեռագրուելուն հետեւեալ օրը արդէն Սուլթանը փութացած է հրամայել: Լօրէնտոյի խնդրոյն մասին Ֆրանսայի պահանջին զոհացում տալ: Բայց Սուլթանի այս փութկոտ զիջումին կարեւորութիւն չէ տրուած Բարիզի մէջ, նկատելով թէ դա չոր հրաման մը ըլլալէ անդին չի անցնիր և դրական ոչ մէկ արդիւնք չի ներկայացներ: Նոյնպէս Բարիզէն կը հեռագրեն թէ Ֆրանսա անգամ մը նաւերը Թուրքիոյ շուրերը զրկելէ վերջ, չի բաւականանար միայն քարափի և Լօրէնտոյի խնդրներուն կարգադրութեամբը, այլ այս առիթէն կուզէ օգտուիլ և ապահովել իր և իր հպատակներուն իրաւունքները, և թշուառական պայուսակներուն ազատ երթելու թեան դէմ քանի մը ամիս առաջ

ի գործ դրուած արգելքին չի կրկնուիրը :

Նոյն իսկ թրքաւեր թերթեր, ինչպէս «Էրտէր. Պէլթ», ֆրանսայի ներկայ խիստ ընթացքը քննադատելու ձեւին տակ չեն թեքանար ըսելու, թէ հայկական կատարածներուն չի շարժող ֆրանսան գրական կանոնը մը համար իր նաւերը ճամբայ հանեց. բայց չենք կարծեր որ այս սպառնալիքին ծայրը պոտերազմի հասնի քանի որ թուրքիա ե ոչ մէկ կերպով կարող չէ ֆրանսայի պատերազմական ահեղ ուժին դիմադրելու, ուստի ստիպուած է անպատճառ զիջում ընել ե ընդունել անոր պահանջները :

Եւրոպական թերթերու այս կարծիքը ակնհիւս ճշմարտութիւն մը պէտք է ըմբռնել, երբ մասնաւոր թուրքիա այսօր իրեն կուսակից ոչ մէկ պետութիւն ունի : Ֆրանսայի այս «յանդուքն քալլը» Պարիսի Մ. Լուպէին, Կոմս Լամարտինի եւ Մ. Տէլքստէին վերջին տեսակցութեանց արգելքը կը բռնուի, ուստի թուրքիա բացարձակապէս ֆրանսայի նեցուկ է, ինչպէս Սուլթանի այնչափ թախանձանքներուն հակառակ բաւականապէս միջամտութիւն մը ընել իսկ մերժեց : Այս պարագային Գերմանիա ալ չպիտի կրնայ աւել բարեխօսութիւն ընել, վախնալով թէ մերժման կը հանդիպի, որ կրնայ ծանր հանգամանք ստանայ : Իսկ Անգլիան թրանսվալի խնդրով զուխը կորսուած վիճակ մը ունի :

Սակայն ֆրանսա եթէ այս բարեպառն հաւիթէն միայն իր գործառնական հաշիւները կարգադրելով բաւականանայ ու ետ կոչէ իր նաւերը, բոլոր աշխարհի հաւատարկաց կարծիքին առջեւ ահեղա

պէս դատապարտելի բայլ մը առած կըլլայ : Թէեւ չենք կարծիք որ Արիւնիքի քրիստոնեաներուն պաշտպան հռչակուած ֆրանսան որ վերջերս Հայկական խժոժութիւններէն զգածուած ցոյց տուաւ ինքզինքը, թիւրքիոյ քրիստոնեաներուն անտանելի վիճակը բարելաւելու գործին ապահովութիւն մը չառած իր մարտանաւերու ցրուակը դէպի Արիւնուտք գործնէ : Արդեօք կը սխալինք մեր այս կարծիքին մէջ :

Գ.

ՆԱՄՍԿ ԱՆԳԼԻԱՅԷՆ

Մանչէսթըր, Ալգէրէ կոչուած մեծանուն Նրապարակին վրայ չընդ հանդէսով մը պղնձեայ փառազարդ արձան մը կանգնուեցաւ անցեալ օր ի յիշատակ Թիւրքիայի քաղաքագէտ Կրիստոֆորի : Սոյն հայրենասէր քաղաքագէտը ու մեծ մարգաւթը, որ ամբողջ ստրուկ ազգաց լուսասփիւռ ստեղծող արձան ու անոնց նուիրական դատին յարած մտաւորական հանդիսացաւ եւ որ իր վարդապետական անպատու գործերով համայն լուսասփիւռեալ աշխարհի հիացումին ու սքանչացումին առարկայ դարձաւ, անտարակուսաբար պէտք էր իր հայրենակիցներէն կանգնուած աղքատի հոյակապ յիշատակական կոթողի մը արժանանար իր անմահական փառքի մշակուած արձանին համար :

Ինչպէս կ'իմանաւ անգլիական թերթերէ, անգլիական, խուռն բազմութեան մը առաջ, հրաւիրուած էր խօսել Անգլիայի ժողովրդական եւ անմարգել պերճախօս մը, Պ. Ճօն Մորի : Սա կ'աւանդէր կեանքը այնպիսի ազգու խօսքերով ներբողած է մանրամասնօրէն որ հանուր հանդիսականաց որոտնդոտ ծափահարութեանց եւ բարձրագոյն գովասանական աղաղակաց արժանացած է :

Նմանապէս անգլիական թերթերէն շատերը Նրապարակաւ համակրական ուղերձներ գրեցին Պ. Ճօն Մորիի

սքանչելի բանախօսութեան վրայ : Աշխարհի մեծագոյն, ազգեցիկ եւ տարածուած ազատական թերթերէ մին «Տէյլի Նիւզ», երկար բարակ փառաբանելէ զինի Պ. Մորիի ճառախօսութիւնը, կեցրկացանէ թէ չկայ աւելի յարմար եւ կորովի անձ մը շարունակելու Կրիստոֆորի գերբնոր քաղաքականութիւնը որքան Պ. Մորիի որ եզակի պերճախօս մըն է :

Մի քանի օրերէ ի վեր անգլիական մամուլը սաստկապէս յուզուած է Սըր Րէյսլըր Պուլլըրի պաշտօնակալութեան վրայ, որ հետզհետէ մեծ խառնաշփոթ կերպարանք մը կ'առնէ : Ամբողջ Բրիտանիոյ ժողովուրդը ու մասնաւորապէս զինուորականութիւնը սոյն անակնկալ եղբուկներէն սարսափած կը բողբօք բուռն կերպով կատապալութեան այդ անխառն գոյժողութեան համար եւ այն անձնաւորութեանց որ պատճառ եղան մեծ ժենէրալին պաշտօնակալութեան, իր պատիւ իր Ուէսթմինսթըրի բանախօսութեան : «Տէյլի Նիւզ» գաղջ կերպով քննադատելէ յետոյ մի քանի մեծափաթեմ պահպանողականներ, վստահաբար կըսէ թէ չպիտի մոռացուի անոր հայրենասիրական անձնուէրաբարձրութիւնը ժողովրդէն որքաշն հոգեով եւ սրտով կը սիրեն ու միշտ պիտի ջանան զայն աբստուրբ չը թողուլ մի քանի ցնորա միտնելու քմահաճօքին համար :

Ուրիշ թերթ մը, «Ստար» այսպէս կըսէ զայրացական կերպով, «եթէ ամեն ոք իր բանախօսութեանէն դատուէր, այժմ Լօրտ Ռօպէրթսի վախճանը ինչ պիտի ըլլար : Այն որ մէկ տարի առաջ յայտարարեց թէ պատերազմը վերջացած էր եւ այդ անգուղական սխալներով ոչ թէ միայն համայն ազգը մոլորեցուց այլ նաեւ պատճառ եղաւ կատապալութեան ուրիշ ազգու միջոցներու գիմուելու» : Իսկ ուրիշներ նմանապէս կը յարձակին կատապալութեան, ասոր գործած սխալներուն համար, եւ միանաւոր կըսեն թէ հայրենասէր զօրավարին անարական հեռացումը զինուորական անդամակնիք քայքայում յառաջ պիտի բերէ :

Բաւական ժամանակներէ ի վեր անգ

լիական մամուլը արտաքին խնդիրներով շատ քիչ կը զբաւրի, քանզի անհամար կենսական ներքին խնդիրներ կան որոնց յուժուած բաւական երկար կը տեւէ :

Ուրախութեամբ կը տեսնեմ որ սօսօրերս անգլիական մամուլին մէջ հայ կեանքէ հրապարակութեանց շարքը կընդլայնի, որոնք անտարակուսելի է թէ իրենց արգիւնքը պիտի ունենան մեզ նպաստաւոր : Պ. Լինչի անգլիական հսկայ հատորներէն զինի «Վարդենի» ծածկանունին ներքեւ «Եսթեր» մակագրով հայկական կեանքէ խիստ հետաքրքրաշարժ վէպ մը լոյս կը տեսնէ, սա շատ գեղեցիկ կերպով շարադրուած է որուն հեղինակը շատ յուսալի է թէ հայ մը ըլլայ :

Պէտք է վստահ գիտնանք եւ հաւատանք թէ որչափ որ նոյնատեսակ Հայ կեանքը շարունակ գրութեան կամ վէպեր Անգլիէն լեզուաւ հրատարակուի յայնչափ Բրիտանիոյ ժողովրդեան սէրը ու համակրանքը կ'աւելնան մեզ նկատմամբ : Թէեւ Անգլիայից ի սկզբանէ Հայոց սուրբ դատին նկատմամբ ամենէն համակրութեամբ ազգեցող ազգը եղան եւ իրենց բարեգործական նպատակներով օգնեցին մեծապէս հայ թշուառներուն, բայց եւ այնպէս անոնց մէջ տակաւին կայ թրքամուլ ստորաքայլէ ակնկրտութեամբ, որոնք հայ անունէն կը գողնին եւ կան տակաւին այնպիսի թերթեր այս ժամանակին որ Սասունի գեղեցիկը հայ յեղափոխականաց կը վերադրեն եւ Թրքահայտանի մէջ կատարուած ամեն խժոժութեանց եւ չարեաց աղբիւրը հայ յեղափոխականները կը նշկատեն, զորս իրենք հայ խռովութեան կամ աւազակներ չկը կոչեն տրամադրէն : Բարեբաղդաբար նոյնատեսակ թերթեր հազուադիւրս են :

«Տէյլի Նիւզ» որ ամեն պարագայի մէջ չէ զլացած հայ նմանական դատին մի քանի պաշտպանողական նուիրել, անցեալ շաբաթեան մէկ թիւոյն մէջ Սասունի արդի ճակատագրական կացութեան վրայ խոսելով մեծ հիացում մը կը ցուցնէր Սասունցիին որ հանապաղ կը յանդգնի պաշտպանել ինքզինքը բռնապետական ճնշումներու դէմ : Եւ կը յաւելուր «այդ

ՊԱՏՄԱՌԹԵՆԷ ԷՋ ՍԸ

ԼԵՀԱՏԻՐՈՅ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

(Շար. Լախոթի քիչեմ)

Լեհաց բռնուող գլխաւորը ամեն կողմ կամ կախուեցան կամ հրացանի բռնուեցան, շատ աւաններ եւ զինքն քանդուեցան եւ ինչ որ Պէրկ կը կատարէր ի Լեհաստան, նոյնը կը գործադրէին Տլուգովսթայ ի Լիւթիւնիա եւ Աննէնով յՈւ. քրանիս : Դերապայծառ Ֆէլինսքի Վարչաւիտ Սրբապիսկոպոսը, նամակով մը առ կայսրն Մարտի մէջ, աղերսներ էր որ Լեհաստան ազատ ազգ մը ըլլայ, իր զլուխ ունենալով Ռուսիոյ հետ միեւնոյն գահակալը : Ֆէլինսքի, ի պատուհան այս գրութեան, Ռուսաստանի ներքերը արտորուեցաւ : Տէրութիւնը 1863ի Յուլիսի արդէն ապահով էր իւր յաղթանակէն եւ Եւրոպական պետութեանց որոնք փորձեր էին խօսքով միջամտութիւն մը ընել, աւելի հաստատապէս պատասխան կուտան որ «Լեհաստանի խնդիրը սնոր վրայ իշխողաց միայն կը պատկանէր կարգադրել» :

Եւ յիշուի որչափ որ ալ Լեհաց այս անգամուան Ապստամբութիւնը չունեցաւ 1794ի եւ 1831ի համակրանքը, այսօր հանդերձ չէր կարելի որ չունենար իւր զթացողքը իր մարդասիրական եւ կամ կրօնական տեսակետներով : ՅԱնգլիա եւ Ի Գաղղիա հասարակաց կարծիքը յուզուեցաւ Ազգի մը

համար որ իւր վերջին ճիգը կը թափէր իւր ազատութեան համար : Իսկ պաշտօնական մարմինը կը դատապարտէին Սպարտիստներին «խաբէրայ գըրգըղները, կոյր հայրենասիրութեամբ մը» : Բայց եւ Անգլիա եւ Գաղղիա միտցնելով միաբան նաեւ զԱւսարիա սահմանեցին միջնորդութիւն եւ միջամտութիւն մը ընել ի նպաստ Լեհաց եւ Յունիս 17ին երեք Պետութիւնք բարեկամութեամբ կ'առաջարկեն բուսական վարչութեան, ընդհանուր ներուժի, Ազգային Խօսարան մը, Հասարակաց Պաշտամանք լին պաշտօնեայք, Բարձուն Հոռմէական կրօնից գէմ. դժուարութեանց, Լեհաստանի մէջ միայն լին կըզուր ըլլայ պաշտօնական եւ զինուորագրութեան նոր կարգաւորութիւն մը : Երեք տէրութեանց առաջարկին չմիացաւ Բրուսիա որուն չափուն հակառակ էր Լեհաստանի ինքնավարութիւնը, ինքը եւս ունենալով լին գաւառներ, անոր համար Ռուսիոյ կողմը բռնեց եւ արդէն 1863ի Փետրուարի այդ իմաստներով պաշտպանութիւն մը ըրած էր Ռուսիոյ հետ :

Երեք Տէրութեանց բարեկամական առաջարկին Աղեքսանդր Կորչաքով իշխանը մերժողական պատասխան մը տուաւ ծանուցանելով որ Լեհաստանի խնդիրը այլ եւս չէր պատկանէր Վեննայի զանա-ժողովը ստորագրողաց եւ թէ այդ ապստամբական յուզումը արդէն ընդհանուր Եւրոպիոյ ամեն կողմ եղած յեղափոխական շարժման հետեւանք մէջ, զոր Պետութիւնք պէտք էին ընկճել ամենուրեք : Գաղղի թարեկարգութեանց առաջարկներուն արդէն Ռուսիոյ Պետութիւնը ինքնաբերաբար այն վեց առաջարկներէն զոման չնորհնր էր Լեհաց, որոնք

սակայն չէին ուզած օգտուիլ : Լեհական խնդրոյն ծանուցադրեք մեծացած են Կորչաքովի անունը : Պետութիւնք քիչնց առաջարկները մերժուելու ժամանակ երեք մտադրութիւն չունէին եւրոպական պատերազմով կամքերին յառաջ յղելու եւ արդէն Ռուսաստան իսկ գիտէր զայդ, նա մասնաւոր որ ամենայնիւ իրեն նեցուկ էր Բրուսիա որով եւ Պետութեանց միջամտութիւնը բնաւ արդիւնք մը չունեցաւ եւ իւրաքանչիւրը լուկեայ խնդրոյն մէջէն հրաժարեցաւ : Նախ Աւստրիա, ապա Անգլիա եւ Նաբոլէոն միայն Հասարակաց կարծիքը գահա-ցնելու համար, մասնաւոր կ'ընդարկան մասը, Օրէնսդիր ժողովքին բացման արժիւ ըսաւ որ «Լեհաստանի Դաշնաժողովը ոտնակոխ եղեր էր ի Վարչաւիա եւ թէ փափաքելի էր որ Դաշնաժողովը մը գումարուէր եւ հաստատուէր Պետութեանց համար Գերագոյն Դատարան մը որ համաձայնեցնէր ժողովրդոց եւ իշխանաց իրաւերը եւ չափերը» : Նաբոլէոն զրկեց իսկ հրաւերներ առ Պետութիւնս այսպիսի Դաշնաժողով մը համար : Սակայն Պետութեանց մէջ ընդունուեցան վերապահմամբ, իսկ Անգլիա բացարձակապէս մերժեց, որպէսզի Նաբոլէոն այս առթիւ իրաւասու մը չերեւնայ Եւրոպիոյ :

Պատմ. Հ. Մ. Նոյրիսան  
(Շարունակելի)

խոնականները որ թէ մտաւորականապէս եւ թէ մարմնապէս քաջաւոր զմարդիկներ են, եւ միշտ գիւցազնական քայլ մը առած ամեն անգամ երբ բռնապետ մը ուզած է ոտնձգել իրենց երկիրը, պիտի թողուի՞ կրկին այս անգամ որ թշնամին պայն խողխողէ»։ Մանաւանդ ջախջախիչ տողերով կը հարուածէր Եւրոպական պետութիւնները, ըսելով թէ ժամանակն է թողուի իրենց փառասիրական անվայել ծակաշուքները ու խղճահար պարսաճանաչութեամբ ուղղորդելու զարձնել «Մեծ Մարդասպանին» առօրեայ եղիւնութեանց։

Կըսուի թէ երիտասարդ թիւրքերու քովի կ'են հաւաքուի մէջ խնդրապիր մը ուղղած է ծէջաւանին հայցելով ֆրանսական միջամտութիւնը թիւրքի մէջ պարզ ժողովուրդներու չարարանաց վերջ մը տալու համար։

Համազասկ  
28 հոկտ. 1901  
Լոնտոն

ՍՏՈՐ ՄԱՏՆՈՒԹԻՒՆ ՄԸ  
— ) —

Ստորիւ կը հրատարակենք ահաւելի ամբաստանագիր մը որ տասր օր առաջ մեզ հասած էր։ Բայց մենք խնդրոյն ծանուցութիւնը նկատի առնելով, հարկ դատած էինք անբաստանողէն լրացուցիչ տեղեկութիւններ պահանջել։ Մինչ մինչ այդ տեղեկութեանց հասնելուն կըրպասէինք, ահա անբաստանեալներէ մին Լիւոն Սարգիս Կոն տեղեկան թերթի մը մէջ խոստովանեցաւ թէ «երկու թուրք հայրենադէմներ, ստորագրութեամբ Ֆիլիպէի թիւրք հիւպատոսին զգուշալ մատնութեան նաւակը խմբագրած է վահան Շահ-Գիւման, բայց բոստին չէ յանձնուած, իսկ անբաստանողը վրաներու տնուններ ցոյց տալով կը պնդէ թէ վ. Շահ-Գիւման ալ խոստովանած է այդ ստոր մատնութիւնը, իբր յանցաւոր միայն Լիւոն Սարգիսեանը ցոյց տալով։

Մենք կրկին կը պատենք զալիք ամբաստանութեանց. բայց այսօր բուն իսկ ամբաստանեալներու խոստովանութեանց վրայ, կարող ենք եզրակացնել թէ գաղափարի դաւաճանութիւնը զործուած է և գաղափարականէն աւելի գործնական ճամբուն մէջ ալ մը տած, քանի որ մատնութեան նամակը խմբագրուած և «Երկու թուրք հայրենադէմներ ստորագրուած է, Նոյն իսկ եթէ, Լիւոն Սարգիսեանի ըսածին նման, նամակը բոստին չի յանձնուելով, անհետեւանք մնացած ըլլալ, գաղափարի դաւաճանութիւնը յղացուած և գլխի գործնականն ալ քալ մը առնուած լինելը ալիւս բացորոշ է։ Ահա ամբաստանագիրը Բաց նամակ հայ երախտարդարեան

7-8 ամիսներ առաջ վստահելի անձէ մը լսած էի որ, վահան Շահ-Գիւման եւ Լիւոն Սարգիսեան 1899ին մատնութիւն մը գործած են հետեւեալ կերպով։

Վերջիշեալ գաղափարական? պա-

րոնները, թուրքերէն նամակ մը կը խմբագրեն ու զղուած տեղւոյն տաճիկ հիւպատոսին՝ որով թիւրք կառավարութեան ուղղորդութիւնը կը հրաւիրեն, նոյն օրերը Պոլսէն մեկնելու պատրաստուող անձնաւորութեան մը վրայ, շեշտելով միանգամայն որ, եթէ հիւպատոսը չուտով նկատողութեան չառնէ՝ իրենց օսմանեան շահերը պաշտպանող առաջարկը, պիտի ստիպուին Պոլսոյ ոստիկանութեան իմացնել։

Նամակը կը շարադրէ վահան Շահ-Գիւման, նամակատուի կը ձգէ Լիւոն Սարգիսեան, նամակին ներքեւը կը ստորագրեն «Երկու թիւրք հայրենադէմներ»։ Այսպէս խոստովանած է Լիւոն Սարգիսեան (\*) իր մէջ բարեկամին, այսպէս նաեւ եւ լսած եմ յիշեալ բարեկամին։

Իտէալիստ յեղափոխականները ??? իրենց նպատակին կը հաւանին։ Ի պահանջել հարկին մանրամասնութիւնները, եւ յիշեալ նամակը գրելուն շարժառիթը հետաքրքիր երկտասարդութեան պարզել պարտքս է։

Մեր աղին երիտասարդութեան, եւ ձեզ՝ կուսակցութիւններուն վրայ պարտք կը ծանրանայ, այս խնդրոյն մասին իրենց որոշ համոզումը գոյացնելէ յետոյ, անողորմ գտնուել զէպի մատնիչը կամ զրպարտիչը, մանաւանդ Հնչ. կուսակցութեան վրայ, որուն վարիչ անդամներէ մին է այսօր վահան Շահ-Գիւման։

Ազնիւ ընթերցող, մինչեւ ցարդ չի հրապարակեցի սոյն խնդիրը, նպասելով որ լաւ մը ուսումնասիրեմ եւ ուրախ եմ այժմ, բաղձաւքս իրագործուած տեսնելու համար։

Վերջերս Բագարան հղբայրս եւ ուրիշ կարեւոր անձեր Բարիզ վահան Շահ-Գիւմանէն բացատրութիւն կը պահանջեն մատնութեան խնդրոյն մասին։ Շահ-Գիւման կը յայտնէ յաղապիսի գէպքի մը գոյութեան ճիշդ ըլլալը, կ'ուրանայ սակայն իր մեղսակից գրողուիլը Լիւոն Սարգիսեանին հետ եւ բոլոր պատասխանատուութիւնը Սարգիսեանի վրայ կը ձգէ։

Ուրեմն օրերի ընթերցող, այլեւս պարզ է թէ, մատնութիւնը կատարուած է սակայն մէկ հոգիով թէ եր-

(\*) Սոյն այն անձն է, որ երեք տարի առաջ Ֆիլիպէի աղագային կախինբուն առնել, Վարդէն սակարկուած, յանկարծ Հնչակեանութենէ Դաշնակցականութեան փոխուելով, ջանացած էր իբր մեր իղթակիցը, իրողութեանց հակառակ խեղաթիւրուելով մեզ ու մեր ընթերցողները խաբել, բայց մենք չատ չուտ սթափելով, մատնանշեցինք իր ոչ պարկեշտ ընթացքը եւ խաղաղ խեղցինք ու եւ է յարաբերութիւն անոր հետ։ (Տեսնել «Իրաւունք»ի 1899 յունվարի թիւերը)։ Այս այն անձն է որ երկար ամիսներ ի բացակայութեան Վարդայի, «Շարժում»ի խմբագրութիւնը վարած է, եւ այդ առիթէն օգտուելով, «Իրաւունք»էն գիմակաղուրկ ըլլալուն վրէժը լուծելու համար, իր տրամադրութեան տակ գտնուող թերթին մէջ կանգնած է «ազատ բեմ» անուն կոյանոցը, ու հինգը վախճուն տալիկան խեղճնոր տաղալուկեցան մեզ գէմ անորակելի լրբութեամբ։

Եւ մտածել թէ այդ մարդու կը մինչեւ այսօր տեղ ոյս ազգ, վարժաբանին մէջ պաշտօն կը վարէ իբր ուսուցիչ։

Ծ. ԽՄԲ.

կու հոգիով. այս կէտը պիտի լուսաբանեն ամբաստանողները։

Վ. Մազմանեան  
Ֆիլիպէ, 13 Հոկտ.

Աւելորդ չենք համարիր Պ. Մազմանեանի մեզ ուղղած մասնաւոր նամակէն հետեւեալ տողերը եւս հրատարակել։

Ներկա կը յուսամ որ առաջին առթիւ կը հրատարակէք։ Բնաւ «Ճիտարկութեամբ» ճշմարտութեանը մասին»։ Բարիքէն վկաներ Օտեան, Մեծատուրեան, Եղբայրս, Մարգուանցի Յակոբ եւ ուրիշներ, որոնց Շահ-Գիւման խոստովանած է, ըսելով որ Լիւոնը ըրած է, հարկաւ պիտի աշխատի որ ինքզինքը արդարացնէ։ Լիւոնը քննա փախչելու տեղ չունի, որովհետեւ հոս ժամանակին մէկ երկու հոգիի խոստովանած է, որոնց առջեւ չի կրնար ուրանալ։

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԶԻԿՈՑ

Ազգ. Պատրիարքարանէ առ մեզ ուղղեալ պաշտօնագիր մը կը ծանուցանէ թէ Պուլկարիոյ քահանայք չի պիտի կարենան տեղափոխութիւնը ընել առանց կեղր. Կրօն. Ժողովոյ գիտակցութեան եւ արտօնութեան։ Այցել. հովիւ Հայոց Պուլկարիոյ Բարք. Մ. Վ. Պաղանեան  
13 հոկ. 1901  
Թ. Բագարճըգ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսոյ ազգ. նախակրթարաններուն այս տարւոյ շրջանաւարտներու վկայականաց բաշխման հանգիստ տեղի ունեցած է Պատրիարքի, Ուսումնական Խորհրդոյ և քննիչ Յանձնաժողովոյ բոլոր անդամոց ներկայութեան, ազգ. պատրիարքարանի մէջ։

Ուսումն. Խորհրդոյ ներկայացուած 87 շրջանաւարտներէն, երկու սեռէ, 65ը միայն արժանի համարուել են վկայականի. իսկ ուսուցչութեան քննութիւն տուող երիտասարդներէն և օրիորդներէն 16ը մասնագէտի և մասնագիտուհիի, և 13ը օգնական ուսուցչի և ուսուցչուհիի վկայական ստացած են։

— Պրի. քսէլի իրաւագիտական վարժարանէն 25 շրջանաւարտ եւ լեր են, որոնց մէջէն մրցհան քըննութեամբ հինգ հոգի Տօքթօր ան Տոնուաի վկայական ստացած են։ Ուրախութեամբ կիմանանք թէ մրցող հինգ շրջանաւարտներուն մէջ առաջին հանդիսացած է Տ. Միհրան Թէլեան համակուկի երիտասարդը։

ԹԱՏՐՈՆ ՍԱՆԴՐԱԼ

1901 Հոկտ. 25 Հիւնդաքի գիշեր ձիշո ժամը 9 ին  
ԱՐՏԱՐՈՑ ԿԱՐԴԻ ՇԻՆՆ ԵՆԿԱՅԱՑՈՒՄ  
ՎԷԱԷՅՈ Հայ դերասանական խմբին կողմանէ

Ի ՆՊԱՍ  
ԵՐԿ. ՈՐԲ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ՎԱՌՆԱՅԻ  
II  
ԵՐԿՈՒ ՅԻՍՆԱՊԵՏՆԵՐ  
ԱՆՁԻՆՔ

|                                          |                  |
|------------------------------------------|------------------|
| Կոմս Ա. Թալէլլա — Սպարապետ               | Տիար Լ. ՇԱՔԱՐԵԱՆ |
| Վայսոս — Գնդապետ                         | » Ե. ԵՐԱՄԵԱՆ     |
| Ռօպէրթօ — Թիւնապետներ                    | » Ս. ԳԱԼԱՐՃԵԱՆ   |
| Կիյոմ ( )                                | » Վ. ՊԱՊԱՅԵԱՆ    |
| Վալանթին — տաճարապետ մականուանեալ անվիշտ | » Ա. ՊԵՆԼԵԱՆ     |
| Իլիսթալ — Նաւային սպայ                   | » Վ. ԼԵՆԵՐ       |
| Թօմա — Նախկին ծառայ Կիյոմի               | » Ե. ԵՐՈՒՆԻ      |
| Անտրէ — Նաւաստի                          | » Մ. ԹԱՇՃԵԱՆ     |
| Լիւսի — Սպասուհի                         | Տիկին ՊԵՆԼԵԱՆ    |
| Դերեզա — Կիյոմի կին                      | » ԼՈՒՍԻ          |
| Լալրա — Վալանթինի եղբոր աղջիկը           | » ՎԷՐՔԻՆ         |
| Ատօլֆ ( )                                | » Կրն. ԱՐՇԱԿ     |
| Կիյոմի գլուկներ                          | » ԳԵՈՒՆԻ         |
| ՀԷՆԵՐ ( )                                | »                |

Զինուորք, նաւաստիք եայլն.

Բ.  
ԶԱՆԳԱԿԸ  
Կ Ա Մ  
ԱԿՆ ԸՆԴ ԱԿԱՆ ԵՒ ԱՏԱՄԵ ԸՆԴ ԱՏԱՄԱՆ  
Խիստ ծիծաղաշարժ կատակերգուքիւն 2 արար  
Դիւեր. Օթեակ թիւ 1- 25 ֆր. 2, 3-20 ֆր. 4, 5-15 ֆր. 7-10 ֆր.  
Ըստ կամս. Ա. Կարգ 2 ֆր. Բ. Կարգ 1 ֆր.

Վստահ ենք թէ քաղաքիս Պատ. ազգայինք, ի նկատի ունենալով Հայաստանի թշուառ ու անօգնական որբերու վիճակը, սիրով պիտի մասնակցին անոնց նպաստելու սոյն գործին. իսկ Գործ. Ժողովս աւանդական համար և կարգապահութեան եւ հանդիսականաց հանգստութեան համար և նմանապէս Պատ. Վէսէլօ խումբը որ խիստ խնամքով պատրաստած է սոյն բարոյալից եւ բնաւանկան խաղը ու ծիծաղաշարժ կատակերգութիւնը, պիտի ջանայ արտակարգ չքեղութիւն մը տալ երեկոյթին։

Одговорникъ Н. Драгулевъ  
Печатница "Взаимность", Варна.